

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/2

3 մայիսի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանի 05.04.2016թ-ի գանգատը եկամտային հարկի գծով հաշվարկված պարտավորությունների դեմ:

Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանի գանգատում բերված փաստարկները.

16.03.2016թ-ին Մաշտոցի ՀՏ-ից զանգահարել և տեղեկացրել են, որ եկամտային հարկի գծով առկա է 463.000 դրամ պարտավորություն: Միաժամանակ տեղեկացրել են, որ այն գոյացել է 2013թ-ի պարզեցված հարկի տարեկան հաշվետվությունից հետո:

Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանը հայտնում է, որ մի քանի անգամ Մաշտոցի ՀՏ-ից մնացորդի վերաբերյալ տեղեկանք է վերցվել, որտեղ նշվել է, որ առկա է 387.630 դրամի գերավճար: Այդ պատճառով այնքան ժամանակ չեն կատարվել մուծումներ, մինչև սպառվի գերավճարը:

02.04.2016թ-ին ստացվել է նաև ծանուցագիր, որտեղ պահանջվում է նշվածի վերաբերյալ ներկայացնել գրավոր բացատրություն:

Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանը խնդրում է վերանայել և անվավեր ճանաչել առաջացած տույժերն ու տուգանքները, քանի որ դրանք գոյացել են հարկային տեսչության կողմից ժամանակին չիրազեկելու հետևանքով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 2013թ-ի համար Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանի կողմից ներկայացվել է տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ, որի 4.6 տողում՝ հարկային գործակալների կողմից պահված հարկի գումար, արտացոլվել է 330.000 դրամ: Նշված գումարը «Հարկատու 3» համակարգի կողմից եկամտային հարկի անձնական հաշվի քարտում դիտվել է որպես պակասեցման ենթակա գումար, այսինքն՝ գերավճար:

Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանի կողմից 28.02.2016թ-ին ներկայացվել է 2013թ-ի տարեկան եկամուտների մասին ճշգրտված պարզեցված հաշվարկ, որում նախկին հաշվարկի 4.6 տողում արտացոլված 330.000 դրամը զրոյացվել է: Արդյունքում, եկամտային հարկի անձնական հաշվի քարտում առկա գերավճարը նույնպես զրոյացել է: Մաշտոցի ՀՏ կողմից կատարվել է հարկային պարտավորությունների վերահաշվարկ, որի հետևանքով 30.03.2016թ-ի դրությամբ Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանի եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմել է ընդամենը 498.890 դրամ:

Նշված պարտավորությունից Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանի կողմից 30.03.2016թ-ին վճարվել է միայն ապառքը՝ գումարով 371.000 դրամ, իսկ հաշվարկված տույժի գումարները մինչ օրս մնում են չվճարված:

Հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի գ) կետի համաձայն՝ հարկ վճարողը պարտավոր է սահմանված ժամկետում հարկային մարմին ներկայացնել (մասնավորապես ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ համաձայն սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 2-րդ հավելվածի, կամ ուղարկել փոստով՝ համաձայն սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 3-րդ հավելվածի, կամ հանձնել ըստ պատկանելության) հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանի կողմից 2013թ-ի համար ներկայացված տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկի 4.6 տողում 330.000 դրամ արտացոլելու հետևանքով եկամտային հարկի անձնական հաշվի քարտում մեխանիկորեն առաջացել է գերավճար: Սակայն նրա կողմից ճշգրտված հաշվարկ ներկայացվելու և պարտավորությունների վերահաշվարկ կատարելու արդյունքում եկամտային հարկի գծով հաշվարկվել են պարտավորություններ: Այսինքն, թե գերավճարի առաջացման, թե պարտավորությունների հաշվարկման համար հիմք են հանդիսացել Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանի կողմից ներկայացված հաշվարկները:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ եկամտային հարկի գծով հաշվարկված պարտավորությունները հիմնավոր են և ենթակա են կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Ռուբիկ Հակոբյանի 05.04.2016թ-ի գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ